ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018թ. Հունիսի 8-ին տեղի ունեցավ Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ «Բ» դասարանի ծնողական ժողովը: Ժողովին մասնակցում էին բոլոր ծնողները, դասղեկ Ար. Մուրադյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի և տարեկան ուսման առաջադիմության արդյունքների ամփոփում
2. Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը

1.Լսեցին.- 2017-2018 ուստարվա 2-րդ կիսամյակի և տարեկան ուսման առաջադիմության արդյունքների ամփոփման հարցը:

Դասղեկ Ար. Մուրադյանը ուրախությամբ նշեց, որ 2-րդ կիսամյակում դասարանում անբավարար գնահատական ունեցող աշակերտ չկա, բոլորը գնահատվել են, դասարանն ունի 100% առաջադիմություն, որակական ցուցանիշը կազմում է 64 %: Դասղեկը տեղեկացրեց, որ ինը աշակերտներ ուսման գերազանցիկներ են, յոթ աշակերտներ ուսման առաջավորներ են:

Գերազանցիկներ

1. Այվազյան Էրիկ
2. Ավագյան Հրայր
3. Բաղալյան Դավիթ
4. Հովհաննիսյան Ռենա
5. Կարապետյան Սյուզի
6. Պետրոսյան Ինգա
7. Սարգսյան Էլեն
8. Մաթևոսյան Աստղիկ
9. Վարդանյան Պետրոս

Ուսման առաջավորներ

1. Գալստյան Անդրանիկ
2. Գալստյան Անետ
3. Գալստյան Լիանա
4. Գասպարյան Միհրան
5. Մկրտչյան Միլենա
6. Պողոսյան Արմենուհի
7. Սարգսյան Գևորգ

Դատեկը նշեց նաև, որ Հովակիմյան Միերը, որը նույնպես ուսումնական տարվա ընթացքում իրեն լավ է դրսևորել, սովորել է լավ և բարձր գնահատականներով, տարվա վերջին «Ռուսաց լեզու » առարկայից ստացել է 6 գահատական, այդիսկ պատճառով չի համարվում ուսման առաջավոր: Մյուս աշակերտները սովորել են միջին գնահատականներով: Ուսուցիչները հոգատար և բարեհամբույր վերաբերմունք են ցուցաբերել հատկապես Պողոսյան Արմենի, Հովսեփյան Միերի, Ղազարյան Վաչագանի, Բաղալյան Հովնանի նկատմամբ, ովքեր դժվարացել են սովորել ուստարվա ընթացքում: Նշված աշակերտների ծնողները առավել հետևողական պիտի լինեն իրենց երեխաների նկատմամբ, որպեսզի գալիք ուստարում նրանք խնդիրներ չունենան:

Որոշեցին.

Աշակերտների ուսման առաջադիմությունը համարել բավարար, խրախուսել ուսման գերազանցիկներին և առաջավորներին:

2. Լսեցին.- Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման հարցը: .

Ելույթ ունեցան ծնողկոմիտեյի անդամներ Լ. Գևորգյանը և Տ. Աբրահամյանը: Նրանք նշեցին , որ տարեվերջյան էքսկուրսիան լավ կլիներ անցկացնել բնության գրկում՝ վայելելով բնության գեղեցկությունը, ծանոթանալով Հայաստանի գեղատեսիլ վայրերին: Չէ որ ճանաչողական էքսկուրսիաները լայն հնարավորություն են տալիս ճանաչելու հայրենի բնաշխարհը: Ծնող Տ. Աբրահամյանը խոսեց այն մասին, որ էքսկուրսիաների ժամանակ երեխաները ավելի ազատ են շփվում միմյանց հետ, իրար լավ են ճանաչում, խաղում են, ուրախանում: Անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան աշխատաքները/ավտոբուս, սնունդ, հանգստի կազմակերպման տեղը և այլն/:

Որոշեցին.

ա. Հավանություն տալ Տ. Աբրահամյանի՝ աշակերտների տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպման առաջարկին, աջակցել դրա իրականացմանը:

բ. Բոլոր աշխատանքներն ավարտել ժամանակին, լուծել ավտոբուսի և սնունդի հետ կապված հարցերը:

Ծնողական խորհրդի նախագահ/ / Հրանուշ Ավագյան

Քարտուղար/ / Տաթևիկ Աբրահամյան